Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 2006թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին

2006 թ. ինստիտուտի ստացած կարևորագույն արդյունքներից է ինստիտուտի կողմից պատրաստած և հրատարակած «Հայոց պատմության հարցեր» հոդվածների ժողովածուի 7-րդ հատորը, որն ընդգրկում է ավելի քան երկու տասնյակ հոդված: Հայ և օտար բազմաբնույթ սկզբնաղբյուրների հարուստ հենքի, ինչպես նաև հարցին առնչվող բազմալեզու գրականության հիման վրա ժողովածուում ամփոփված են Հայաստանի հին, միջին, նոր և նորագույն շրջանի պատմության մի շարք հիմնահարցեր: Բացի քաղաքական պատմության հիմնախնդիրներից, ժողովածուն ընդգրկում է նաև պատմագրության, աղբյուրագիտության նվիրված ուսումնասիրություններ: Ժողովածուն ամփոփում է 2006թ. մայիսի 20-ից 21-ը Եղեգնաձորում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կազմակերպած Երիտասարդ գիտաշխատողների 29-րդ նստաշրջանի նյութերը:

2006 թ. ինստիտուտի ձեռք բերած ամենանշանակալի արդյունքն է «Հայ պարբերական մամուլի պատմություն (18-19-րդ դարեր)» մեծածավալ (700 էջ) աշխատության 1-ին հատորի հրատարակումը: Հատորն ընդգրկում է 18-19-րդ դարերի, ինչպես արևմտահայ և արևելահայ, այնպես էլ հայկական գաղթավայրերի հայ պարբերական մամուլի պատմությունը: Բնութագրված են հայ լրագրության մեջ առավել աչքի ընկնող պարբերականները, բացահայտվել են նրանց տեղն ու դերը ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ:

Հեղինակների խմբի կողմից ստեղծված այս աշխատությունը մեծ ներդրում է հայ պատմագիտության մեջ:

2006թ. ինստիտուտի ձեռքբերած նշանակալի արդյունքներն են պետբյուջեից ֆինանսավորվող 3՝ բազային և 6՝ թեմատիկ թեմաների գծով կատարած զգալի աշխատանքները, հրատարակած մենագրություններն ու ժողովածուները, տասնյակ գիտական հոդվածները և հրապարակումները: Հաշվետու տարում ինստիտուտի գիտաշխատողները շարունակել են աշխատանքները «Հայոց պատմության» ակադեմիական նոր բազմահատորյակ ստեղծելու ուղղությամբ:

«Միջին դարերի պատմություն» (ղեկ.Հ.Բարթիկյան) թեմայի շրջանակներում լույս է տեսել ակադեմիկոս Հ.Բարթիկյանի «Հայ-բյուզանդական հետազոտություններ» աշխատության երրորդ հատորը, այն իրենից ներկայացնում է 2002թ. նույն խորագրով լույս տեսած երկհատորյակի շարունակությունը: Մեկ տասնյակ հոդվածները վերաբերում են աղբյուրագիտության, հայ-բյուզանդական քաղաքական, եկեղեցական հարաբերություններին, Բյուզանդիայի տարածքում կազմավորված հայ համայնքներին և այլ հարցերի:

Նույն թեմայի ուսումնասիրության շրջանակներում լույս է տեսել ինստիտուտի ավագ գիտաշխատող Հ.Սվազյանի «Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից – 8-րդ դարը ներառյալ)» մեծածավալ մենագրությունը, որը նվիրված է Աղվանից աշխարհի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի պատմության ուսումնասիրությանը նշված ժամանակաշրջանում:

Աղբյուրագիտական լայն հենքի վրա գրված այս աշխատանքն ունի ոչ միայն պատմագիտական, այլև քաղաքական կարևոր նշանակություն:

«Հայ գաղթավայրերի և Սփյուռքի պատմություն» թեմայի (ղեկ.՝ Վ. Բարխուդարյան) շրջանակներում լույս է տեսել ակադեմիկոս Վ.Բարխուդարյանի «Համառոտ ուրվագիծ Ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության (18-րդ դարի վերջ - 20-րդ դարի սկիզբ)» գրքույկը՝ նվիրված ռուսական կայսրության տարբեր վայրերում ու քաղաքներում ձևավորված հայկական գաղութների ուսումնակրթական, առավելապես դպրոցական կյանքի ուսումնասիրությանը: Լուսաբանվում են ռուսական միջավայրի ազդեցությամբ հայկական շրջաններում տարվող ուսումնական գործընթացի բնորոշ կողմերն ու յուրահատկությունները:

«Հայաստանի պատմական աշխարհագրություն, ժողովրդագրություն և քարտեզագրություն» թեմայի (ղեկ. Ա.Մելքոնյան) շրջանակներում հրատարակվել է ինստիտուտի գիտաշխատող պ.գ.թ. Հ.Մուրադյանի «Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին» մենագրությունը, որում ներկայացվում են Մեծ Հայքի Այրարատ աշխարհի Շիրակ (Ախուրյան գետից աջ ընկած հատվածը), Արշարունիք, Գաբեղյանք և Վանանդ գավառների հենքի վրա կազմավորված Արևմտյան Հայաստանի Կարսի նահանգի վարչատարածքային բաժանումները, գավառների ու բնակավայրերի տեղաբաշխումը և տեղագրությունը, ժողովրդագրական տեղաշարժերը և դրանց սոցիալ-քաղաքական նախադրյալները և թեմային առնչվող մի շարք այլ հիմնահարցեր:

«Հայ ազգային-քաղաքական կուսակցությունների պատմություն» թեմայի ուսումնասիրության շրջանակներում լույս է տեսել ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.դ. Գ.Խուդինյանի «ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը)» արժեքավոր մենագրությունը: Այն ՀՅ Դաշնակցության գաղափարական ակունքների, ձևավորման գործընթացի, գործունեության վաղ շրջանի պատմա-քննական ուսումնասիրության փորձ է: ՀՅԴ ձևավորման գործընթացը քննության է ենթարկվում ներազգային ու միջազգային կացության վերլուծության հենքի վրա: Մանրակրկիտ ուսումնասիրվում է ՀՅԴ համահայկական կառույցի կազմավորման վաղ շրջանը՝ վերականգնելով մեծ թվով անհայտ գործիչների անուններ: Կուսակցության գաղափարախոսության հանգամանալից քննության միջոցով բացահայտվում է ՀՅԴ խաղացած դերը հայ քաղաքական ու փիլիսոփայական մտքի պատմության մեջ:

«Կիլիկյան Հայաստանի և կիլիկիահայության պատմության հիմնահարցեր (14-20-րդ դարի սկիզբ)» թեմայի (ղեկ.Ռ.Գասպարյան) գծով լույս է տեսել պ.գ.թ. Ռ. Գասպարյանի «Հայկական կոտորածները Կիլիկիայում (19-րդ դարի 90-ական թթ. – 1921թ.» մենագրությունը: Հայ և օտար արխիվային վավերագրերի, աղբյուրների, պատմագիտական գրականության հիման վրա գրքում պատկերված է կիլիկիահայության ողբերգական պատմությունը, այն հայաջինջ քաղաքականությունը, որ իրականացնում էին թուրքական իշխանությունները: Առավել հանգամանալից ներկայացված են Կիլիկիայի 1909թ. կոտորածները, 1915-1916թթ. Մեծ Եղեռնը, 1918-1921թթ. ողբերգական իրադարձությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կիլիկիահայության մղված ինքնապաշտպանական մարտերին:

«Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն» (ղեկ.՝ Ս.Ստեփանյան) թեմայի ուսումնասիրության շրջանակներում լույս է տեսել ինստիտուտի ավագ գիտաշխատող Ա.Ղամբարյանի «Հայկական հարցը 1912-1914թթ. և Մեծ Բրիտանիան» աշխատությունը: Այն նվիրված

է Մեծ Բրիտանիայի քաղաքականության ուսումնասիրությանը Հայկական հարցում: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրված հարուստ փաստական նյութի հանգամանալից վերլուծությունը թույլ է տալիս ներկայացնել այն եզրակացությունը, որ Արևմտյան Հայաստանի համար նախատեսված բարենորոգումների խնդրի վերաբացումը, քննարկումները, և, ի վերջո, բացասական լուծումները որոշակիորեն պայմանավորված էին նաև Հայկական հարցում Մեծ Բրիտանիայի որդեգրած քաղաքականությամբ:

Թեմայի գծով հրատարակվել է նաև ինստիտուտի ավագ գիտաշխատող Ռ.Սահակյանի «Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին» մենագրությունը, որում լուսաբանվում են 1914-1916թթ. օսմանյան Թուրքիայի տիրապետության ներքո գտնվող Արևմտյան Հայաստանի և Փոքր Ասիայի հայաբնակ նահանգների հայ բնակչության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները: Արխիվային նյութերի, սկզբնաղբյուրների, հայ և օտար պատմաբանների աշխատությունների հիման վրա ներկայացված են երիտթուրքական կառավարության կողմից իրականացված ոճրագործությունները և օսմանահպատակ հայերի հերոսամարտերը:

Նույն թեմայի ուսումնասիրության շրջանակներում լույս է տեսել ինստիտուտի գիտաշխատող Ա.Անանյանի «Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում» աշխատությունը: Նրանում հեղինակն անդրադառնում է Հայոց ցեղասպանության ճանաչման հիմնահարցի ազդեցությանը ՀՀ արտաքին քաղաքականության ու մասնավորապես հայ-թուրքական միջպետական ու հասարարակական հարաբերությունների վրա:

«Խորհրդային Հայաստանի պատմություն» թեմայի (ղեկ.՝ Վ.Ղազախեցյան) շրջանակներում հրատարակվել է պ.գ.դ., պրոֆ. Վ.Ղազախեցյանի «Հայաստանը 1920-1940թթ.» բարձրարժեք մենագրությունը: Աշխատության մեջ նորահայտ վավերագրերի ու գաղտնազերծված տպագրված նյութերի գիտական ուսումնասիրությունների հիման վրա նորովի լուսաբանվում են Խորհրդային Հայաստանի առաջին քսանամյակի պատմության հիմնահարցերը՝ ժամանակակից պատմագրության տեսանկյունից:

Նույն թեմայի ուսումնասիրության շրջանակներում լույս է տեսել ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պ.գ.դ. Կ.Հարությունյանի «Ավիացիայի Մարշալ՝ Ս.Ա. Խուդյակով (Ա.Ա. Խանփերյանց) աշխատությունը: Ռուսական պետական արխիվներում հայտնաբերած բազմաթիվ և բազմաբնույթ սկզբնաղբյուրների, փաստաթղթերի, մամուլի հրապարակումների հարուստ հենքի հեղինակին հաջողվել է առաջին անգամ առանձին գրքով ներկայացնել ԽՍՀՄ հայազգի մարշալ Խուդյակով-Խանփերյանցի հերոսական կյանքը:

Ինստիտուտի կողմից 2006թ. հրատարակված աշխատությունների ցուցակը

1. **Հայոց պատմության հարցեր** հ. 7, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
2. **Արմենուհի Ղամբարյան,** Հայկական հարցը 1912-1914թթ. և Մեծ Բրիտանիան, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ

3. **Վլադիմիր Ղազախեցյան,** Հայաստանը 1920-1940թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
4. **Վլադիմիր Բարխուդարյան,** Համառոտ ուրվագիծ ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
5. **Աղասի Մելքոնյան,** Հայաշխարհ գողտրիկ Ջավախք, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
6. **Հակոբ Մուրադյան,** Կարսի նահանգի վարչաժողովրդագրական նկարագիրը 19-րդ դարի առաջին երեսնամյակին, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
7. **Սուն Ցզի,** Երկ ռազմական արվեստի մասին, (**թարգմանությունը Ռուբեն Սահակյանի**), Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
8. **Անանյան Ա.,** Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը հայ-թուրքական հարաբերություններում (1991-2004թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
9. **Մանուկյան Ե.,** Հայ ժողովրդի ազգահավաքման գործընթացը Արևելյան Հայաստանում 19-րդ դարի 20-ական թվականների վերջերին – 30-ականների սկզբին, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
10. **Խուդինյան Գ.,** ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895թ. վերջերը), Երևան, ՀՅԴ հրատարակչություն
11. **Հարությունյան Կ.,** Ավիացիայի մարշալ Ս. Ա. Խուդյակով - Ա.Ա Խանփերյանց (ռուսերեն), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
12. **Էմմա Կոստանդյան,** «Արծուի Վասպուրական» ամսագրի մատենագիտություն (1855-1856, 1858-1864թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ:
13. **Գոհար Վարդումյան, Երվանդ Մարգարյան,** Կրոնների պատմություն (ուսումնական ձեռնարկ), պրակ Ա, Հին կրոններ, Երևան, Լինգվա
14. **Ռուբեն Սահակյան,** Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
15. **Ռուբեն Սահակյան,** Տերոյան Վարազդատ. Գիտական և հրապարակախոսական աշխատություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
16. **Հրաչ Բարթիկյան,** Հայ-բյուզանդական հետազոտություններ, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
17. **Գուրգեն Գեղամյան, Ռուբեն Սահակյան,** Դրվագներ հայ օդաչուների Արցախում մղած հերոսական պայքարից, Երևան, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ
18. **Ռուբեն Գասպարյան,** Հայկական կոտորածները Կիլիկիայում (19-րդ դարի 90-ական թթ. – 1921թ.), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»
19. **Հենրիկ Սվազյան,** Աղվանից աշխարհի պատմություն (Հնագույն շրջանից – 8-րդ դարը ներառյալ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն»

Ինստիտուտի անցկացրած հանրապետական և միջազգային կոնֆերանսները, սիմպոզիումները և այլ գիտական միջոցառումներ

N	Միջոցառումները	Անցկացման վայրն ու ժամանակը, կազմակերպիչները	Մասնակիցների թիվը	
			ընդամենը	այդ թվում արտ. երկրներից
1	Երիտասարդ գիտնականների 29-րդ գիտաժողով	Եղեգնաձորի պետական համալսարան 20-21.05.2006թ. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ	60	-
2	«Արևմտյան Հայաստան-2006» ցուցահանդես	ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճ 17. 11. 2006թ. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի	150	5

ՊԻ աշխատակիցների արտասահման, այդ թվում ԱՊՀ անդամ երկրներ, կատարած գործուղումները

Երկիրը	Գործուղված գիտնականների թվաքանակը		
	Գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
Ռուսաստան	-	2	1
Տաջիկստան	-	-	1
Ֆրանսիա	1	-	1
Եգիպտոս	1	1	-

Արտասահմանյան գիտնականների ընդունելություն ԳԱԱ հիմնարկություններում

Երկիրը	Ընդունված գիտնականների թվաքանակը		
	գիտաժողովներին մասնակցելու համար	Համատեղ գիտական աշխատանք կատարելու համար	Բանակցությունների և կոնսուլտացիաների համար
Ռուսաստան	-	2	2
ԱՄՆ	-	2	1
Գերմանիա	-	-	1
Եգիպտոս	-	1	1
Լիբանան	-	-	2
Իրան	-	4	1

ՊԻ գիտաշխատողների 2006 թ. հրապարակումների ընդհանուր քանակը

Մենագրություն, ժողովածու և այլն		Ուսումնական ձեռնարկ, դասագիրք և այլն		Հոդվածներ, զեկուցումների թեզիսներ և այլն	
Հանր.	Արտասահ.	Հանր.	Արտասահ.	Հանր.	Արտաս
18	-	1	-	131	21

Ասպիրանտների թվաքանակը

Ասպիրանտների քանակը (այդ թվում կանայք) առ 1. 01. 2007թ.		Հաշվետու տարում ասպիրանտուրա են ընդունվել (այդ թվում կանայք)	
ա)կ	ա)չկ	ա)կ	ա)չկ
2	3	4	5
5 (-)	8 (1)	-	2 (-)

ՊԻ աշխատողների թվաքանակի ամփոփ տվյալներ

Աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում կանայք)	Գիտական աշխատողների ընդհանուր թիվը (այդ թվում կանայք)	ԳԱԱ ակադեմիկոսներ (այդ թվում կանայք)	Գիտության դոկտորներ (այդ թվում կանայք)	Գիտության թեկնած. (այդ թվում կանայք)
3	4	5	6	7
101 (38)	79 (25)	5 (-)	21 (2)	38 (12)

Մասնագիտացված գիտական խորհուրդների աշխատանքները

Պաշտպանությունների թիվը			
Ինստիտուտների աշխատակիցների կողմից		Ինստիտուտներից դուրս հայցողների կողմից	
դոկտ.	թեկնած.	դոկտ.	թեկնած.
3	4	5	6
-	4	-	10

Ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Ա.Ա.Մելքոնյան